02 Շաբաթաթերթ

Հայաստանի Հանրապետության ոստիկանություն

ISSN 1829-2526

Տպագրվում է 1990 թվականից

14 (1413) • 19 ապրիլի 2019 թ. • Գինը՝ 150 դրամ

www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am

Հանդիսություններ մասնագիտական տոնի առթիվ

Հայաստանի Հանրապետության ոստիկանությունն ապրիլի 16-ին նշում է իր մասնագիտական տոնը՝ Ոստիկանի օրը: Նշում է հպարտության, արժանապատվության, պատասխանատվության զգացումով, որպես երկրի պետականաստեղծ կառույցներից ու հիմնասյուներից մեկը, որը դարից ավելի ծառայում է իրավակարգի եւ քաղաքացու պաշտպանության առաջնագծում:

Տոնական հանդիսությունները մեկնարկեցին առավոտյան:

ՀՀ ոստիկանության պետ Վալերիյ Օսիպյանի գլխավորությամբ՝ ոստիկանության կոլեգիայի անդամները, բարձրաստիճան սպաները, վետերաններն ու հյուրերը ծաղկեպսակներ ու ծաղիկներ խոնարհեցին Արամ Մանուկյանի եւ Իրավակարգի զինվորի հուշարձաններին՝ հարգանքի տուրք մատուցելով ոստիկանության համակարգի հիմնադիր գործիչներին եւ ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված զինակիցներին:

Ոգեկոչման արարողությանը հաջորդեց ՀՀ ոստիկանության պատվո պահակախմբի ցուցադրական ելույթը, որին ներկա էին Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանը, Հայաստանի եւ Արցախի հանրապետությունների տարբեր գերատեսչությունների, զինված ուժերի, իրավապահ մարմինների ղեկավարներ, բարձրաստիճան սպաներ, հյուրեր:

Տոնական օրը շարունակվեց հանդիսավոր նիստով:

Ոստիկանության քայլերգի ներքո դահլիճ բերվեցին Հայաստանի Հանրապետության ու ոստիկանության դրոշները:

Հնչեց Հայաստանի Հանրապետության պետական օրհներգը:

Հանդիսավոր նիստի սկզբում Ոստիկանության անձնակազմին տոնի առթիվ շնորհավորանքի խոսք հղեց Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

Այնուհետեւ Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանը պետական պարգեւներ հանձնեց խրախուսանքի արժանացած ոստիկանության մի խումբ ծառայողների:

Հայաստանի Հանրապետության ոստիկանության մասնագիտական տոնի առթիվ ոստիկանության անձնակազմին, վետերաններին, ոստիկանական ընտանիքներին շնորհավորանքի ջերմ խոսք հղեց ոստիկանության պետ Վալերիյ Օսիպյանը:

էջ 2

Հետախուզվողը հայտնաբերվեց

«Նելեգալ-2019» եւ «Զինանոց-2019» համալիր-կանխարգելիչ միջոցառումների շրջանակներում ոստիկանության Թումանյանի բաժնի եւ Լոռու մարզի քննչական վարչության Թումանյանի քննչական բաժնի ծառայողների համատեղ ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների եւ քննչական գործողությունների շնորհիվ ապրիլի 11-ին Լոռու մարզի Դսեղ գյուղից ոստիկանության Թումանյանի բաժին բերման է ենթարկվել 37-ամյա Շահեն Ք.-ն, որը հետախուզվում էր ոստիկանության Թումանյանի բաժնի կողմից՝ քրեական օրենսգրքի 112 հոդվածի (դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը) 2-րդ մասի 9-րդ կետի մեղադրանքով:

Առանց վաղեմության ժամկետի

Նախկինում կատարված հանցագործությունների բացահայտումը լավագույն կանխարգելումն է. ցրվում է անպատժելիության խաբկանքը, իսկ օրինավոր մարդու մեջ արդարության հավատն է ամրանում: Բոլոր հանցագործություններն է պետք բացահայտել: Սա ոչ միայն կարեւորագույն գործառույթի պատշաճ իրացում է ոստիկանության պարագայում, այլեւ անբեկանելի սկզբունք:

2018 թվականին 499-ով աճել են նախկին տարիներին կատարված քրեական գործերով հանցագործությունների բացահայտման դեպքերը (2017 թ.՝ 976 դեպք, 2018 թ.՝ 1475 դեպք):

էջ 6

Սպանություն էջմիածնում

Ապրիլի 13-ի երեկոյան ոստիկանության Վաղարշապատի բաժնում հաղորդում ստացվեց, որ էջմիածնի Մաշտոցի փողոցի 10-րդ շենքի բնակիչներից մեկը հեռախոսազանգերին չի արձագանքում, նրա բնակարանը տակնուվրա է արված, ավտոտնակի դռները բաց են, մեքենան էլ ներսում չէ: Հաղորդմանն արագ արձագանքած ոստիկանության եւ քննչական կոմիտեի ծառայողները նշված բնակարանում հայտնաբերեցին տանտիրոջ՝ 81-ամյա Գագիկ Բաղդասարյանի դին: Տղամարդու բերանը, աչքերը, ձեռքերն ու ոտքերը կպչուն ժապավենով կապկպված էր: Դիակի արտաքին զննությամբ՝ գլխին վնասվածքներ հայտնաբերվեցին: Գագիկ Բաղդասարյանին սպանել էին: Ամբողջ բնակարանը տակնուվրա էր արված: Տակնուվրա էր արված նաեւ սպանվածի խանութը, որը բնակարանի ներքեւի հարկում է:

Ոստիկանության տարբեր ստորաբաժանումների ծառայողներից ձեւավորվեցին օպերատիվ խմբեր, ճշտվեց հանցագործությունը կատարելու մեջ կասկածվող անձանց շրջանակը: Նրանք վերցվեցին ոստիկանության ծառայողների օպերատիվ տեսադաշտ, ճշտվեց յուրաքանչյուրի այլուրեքությունը դեպքին նախորդած եւ հաջորդած ժամերին:

Լայնածավալ օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում կարճ ժամանակում ոստիկանները պարզեցին հանցագործությունը կատարելու մեջ կասկածվող անձանց ոչ միայն ինքնությունը, այլեւ նրանց շարժը:

էջ 2

Ավազակային հարձակումը բացահայտվեց

Ապրիլի 13-ին Վանաձորում ավազակային հարձակում էր կատարվել: Տուժողը բենզալցակայանի աշխատակից է: Ըստ ոստիկանության Տարոնի բաժնում ստացված հաղորդման՝ մի երիտասարդ դանակը պահել էր աշխատակցի պարանոցին ու սպառնացել, թե կմորթի: Հետո մտել էր աշխատասենյակ ու փող եւ բջջային հեռախոս հափշտակել:

Դեպքի առթիվ քրեական գործ հարուցվեց:

Ոստիկանության Տարոնի բաժնի ծառայողները նախ ճշտեցին հարձակվողի արտաքին նկարագիրը՝ այդ մասին կողմնորոշումներ ուղարկելով տարածքային մի շարք ստորաբաժանումների գործընկերներին: Բենզալցակայանի աշխատակցին դանակով սպառնացած երիտասարդը Լոռվա բարբառով էր խոսել: Այս հանգամանքը քրեական հետախույզներին հուշեց, որ հարձակվողը տեղացի է: Մի քանի ժամ տեւած միջոցառումները հանգուցալուծվեցին Լոռու մարզի Գյուլագարակ գյուղում: 22-ամյա Դավիթ Ներկարարյանը հայտնաբերվեց Գյուլագարակում եւ, ավազակություն կատարելու կասկածանքով, բերման ենթարկվեց ոստիկանության Տարոնի բաժին:

Դավիթ Ներկարարյանը կալանավորվել է:

Կրակոցներ խանութի մոտ

Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավճռի համաձայն՝ Գյումրիի բնակիչ Աշոտ Գրիգորյանը «առանց ռեալ անհրաժեշտության՝ նախահարձակ է եղել» իր հետ նախապես վերցրած հրազենով: 2015 թ. մարտի 7-ին Գյումրիի Մյասնիկյան փողոցում եղբայրներ Կնյազ եւ Գագիկ Ղ.-երի հետ նախկինում ունեցած տարաձայնությունների կապակցությամբ պարզաբանման ժամանակ, իր մոտ եղած որսորդական 12 տրամաչափի ողորկափող հրացանից կրակոցներ է արձակել: Կնյազ Ղ.-ին պատճառել է ծանր վնասվածքներ. նա մարտի 11-ին հիվանդանոցում մահացել է: Գագիկ Ղ.-ին պատճառվել է ձախ ուսագոտու շրջանի՝ անրակի բազմաբեկոր կոտրվածքով, փափուկ հյուսվածքների ջնջումով հրազենային կոտորակային վնասվածքի ձեւով՝ առողջության միջին ծանրության վնաս:

էջ 7

Հանդիսություններ մասնագիտական տոնի առթիվ

Սկիզբը` էջ 1

Ոստիկանության օրվա առթիվ շնորհավորանքի խոսք ասաց եւ համակարգի ձեւավորման ընթացքին անդրադարձ արեց ՀՀ վետերանների խորհրդի նախագահ Գրիգորի Աբովյանը:

Մասնագիտական տոնի առթիվ ոստիկանության անձնակազմին շնորհավորական ուղերձներ հղեցին եւ ծառայության մեջ աչքի ընկած ու խրախուսանքի արժանացած ոստիկաններին պարգեւներ հանձնեցին Անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանը, Պաշտպանության նախարար Դավիթ Տոնոյանը, Ազգային անվտանգության ծառայության տնօրեն Արթուր Վանեցյանը, Արդարադատության նախարար Արտակ Զեյնալյանը, Արտակարգ իրավիճակների նախարար Ֆելիքս Ցոլակյանը, Գլխավոր դատախազ Արթուր Դավթյանը, Քննչական կոմիտեի նախագահ Հայկ Գրիգորյանը, Հատուկ քննչական ծառայության պետ Սասուն Խաչատրյանը, Արցախի Հանրապետության ոստիկանության պետ Իգոր Գրիգորյանը:

Ոստիկանության մասնագիտական տոնի առթիվ տարբեր կառույցների, գերատեսչությունների եւ ծառայությունների ղեկավարների հրամաններով խրախուսանքի են արժանացել ոստիկանության եւս 83 ծառայողներ, որոնց պարգեւներն արդեն իսկ հանձնվել են:

Հանդիսավոր նիստի ավարտին հրապարակվեցին Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի հրամանները` ծառայության մեջ աչքի ընկած մի շարք ոստիկանների խրախուսելու մասին:

Պարգեւները հանձնեց ոստիկանության պետ Վալերիյ Օսիպյանը:

Ոստիկանության պետի հրամանով` ծանր եւ առանձնապես ծանր հանցագործությունների բացահայտմանը գործուն աջակցություն ցուցաբերած մի խումբ ոստիկանների հանձնվեցին պարգեւավճարներ:

Ոստիկանության պետ Վալերիյ Օսիպյանի հրամաններով պարգեւատրվել են ոստիկանության եւս 346 ծառայողներ եւ 34 վետերաններ, պարգեւավճարներ են հանձնվել 16 ծառայողների:

Հանդիսավոր նիստի ավարտից հետո ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանն ու հյուրերը ոստիկանության պետ Վալերիյ Օսիպյանի ուղեկցությամբ ծանոթացան ոստիկանության թանգարանի եւ կազմավորվող պարեկային ծառայության նոր համազգեստի նմուշներին:

Ոստիկանության օրվան նվիրված հանդիսություններն ամփոփվեցին Ոստիկանության զորքերի պատվո պահակախմբի եւ նվագախմբի հանդիսավոր երթով մայրաքաղաքի փողոցներով, Հյուսիսային պողոտայում կազմակերպված ֆլեշ-մոբով, Հանրապետության հրապարակի ցուցադրական ելույթով ու տոնական համերգով` Ազատության հրապարակում:

Սպանություն Էջմիածնում

Սկիզբը` էջ 1

Դեպքից ժամեր անց Դիլիջանի ոլորաններում հայտնաբերվեց սպանվածի «Լեքսուս» մակնիշի ավտոմեքենան` վքարված վիճակում: Մեքենայի համարանիշերը փոխված էին: Նույն օրը հայտնաբերվեց ու կասկածանքով ոստիկանության Վաղարշապատի բաժին բերման ենթարկվեց Էջմիածնի բնակիչ Մարիետտա Խաչատրյանը: Իրավապահները կարճ ժամանակում պարզեցին նաեւ հանցագործությունը կատարելու մեջ կասկածվող մյուս անձի ինքնությունը: Նրա վերաբերյալ կողմնորոշումներ ուղարկվեցին ոստիկանության տարածքային ստորաբաժանումներին: Արդյունքում` ապրիլի 15-ին ոստիկանության Նոյեմբերյանի բաժնի ծառայողները Տավուշի մարզում հայտնաբերեցին ու կասկածանքով բերման ենթարկեցին Արարատի մարզի Արարատ գյուղում ապրող Ղազար Մնացականյանին:

Բերման ենթարկվածները ոստիկանությունից ներկայացվել են դեպքի նախաքննությունը վարող մարմնին ու կալանավորվել:

Կատարվում է նախաքննություն:

Հայտնաբերվեց յոթ տարի անց

Յոթ տարի առաջ հանցագործության բացահայտման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումներն անարդյունք մնացին: Գողության փաստով հարուցված քրեական գործի վարույթը կասեցվեց` քրեական գործով որպես մեղադրյալ ներգրավված անձի անհայտ լինելու հիմնավորմամբ: Տարեցտարի աշխատակիցների հիշողություններում էլ մարեց մանկապարտեզից կատարված գողությունը, հետո շենքը նորոգվեց, դարձավ ավելի ապահով: Ով գիտե, գուցե գողերն էլ մտքից հանեցին հանցագործին տանջող վախը. չէ՞ որ ամեն ինչ գնալով ավելի ու ավելի էր թաղվում մոռացության մեջ: Բայց...

Հանցագործությունը բացահայտվեց ոստիկանության Էրեբունու բաժնի քրեական հետախույզների ջանքերով, ինչը հնարավոր չէր լինի, եթե գործի վերաբերյալ կուտակված տեղեկությունները չվերլուծվեին, նոր տեղեկություններ չհավաքվեին:

Հանցագործությունից երկու տարի անց, գողություն կատարելու կասկածանքով, ոստիկանության Էրեբունու բաժին բերման ենթարկվեց Երեւանի բնակիչ Լեւոն Թորոսյանը: Հանցավոր արարքն իբր «թռել էր» հիշողությունից` դժվարանում էր մտաբերել մանրամասները: Բայց հիշեց` ում հետ էր եղել: Նոր Արեշ թաղամասի բնակիչ Արման Հակոբյանի հետ հետագայում կապը կտրվել էր, բայց նախկինում թունդ ընկերություն էին անում: Գողության օրն էլ էին միասին: Անձրեւից պատսպարվելու համար մտել էին մանկապարտեզի բակ ու ծվարել տաղավարում: Հետո Արմանի առաջարկով մտնել էին շենք` իրենց պիտանի որեւէ բան «վերցնելու»: Անցել էին սենյակներով, բայց հետաքրքրող ոչինչ չէին տեսել: Միակ դիտարժանը տնօրենի աշխատասենյակի չհրկիզվող պահարանն էր: Փորձել էին տեղում պարզել պարունակությունը, բայց ավելորդ աղմուկից խուսափելու համար պահարանը գրկել, հանել էին շենքից, հասցրել հարակից դաշտն ու կոտրել փականը: Պահարանում եղած առանձնապես խոշոր չափի գումարը հավասար բաժանել ու հեռացել էին:

Առավոտյան աշխատավայր եկած տնօրենը տեսել էր ոտնատակ արված մանկապարտեզը, նկատել էր, որ երկաթյա պահարանը չկա եւ զանգել էր ոստիկանություն: Դեպքի վայր շտապած Էրեբունու ոստիկանները դեռեւս թաց ոտնահետքերից գլխի էին ընկել, թե որտեղ կարող է տարված լինել պահարանը: Այն հայտնաբերվել էր, բայց...

Նախապատրաստված նյութերի հիման վրա ոստիկանության Էրեբունու քննչական բաժնում քրեական գործ հարուցվեց: Նախաքննության ընթացքում ոստիկանները զրուցեցին մոտակա տների բնակիչների հետ: Գողությունը կատարվել էր մայիսի 25-ին: «Վերջին զանգ» էր. բացի քեֆ-ուրախության ձայնից, մարդիկ ոչինչ տարօրինակ չէին լսել կամ նկատել:

Ոստիկանություն հրավիրվեցին տարածքում ապրող եւ գողության համար նախկինում դատապարտված անձինք: Դարձյալ ոչ մի արդյունք...

Դեպքից երկու տարի անց միայն քրեական հետախույզներին հաջողվեց գտնել հանցագործության հետքը: Գողությունը կատարելու կասկածանքով բերման ենթարկվեց Լեւոն Թորոսյանը: Խոստովանեց` մատնանշելով նաեւ հանցակցին:

Կասեցված քրեական գործի վարույթը Լեւոն Թորոսյանի մասով վերսկսվեց: Նա ենթարկվեց քրեական պատասխանատվության:

Իսկ ահա, յոթ տարի անց քրեական պատասխանատվության փաստի առաջ հայտնվեց նաեւ Արման Հակոբյանը:

Նա ժամկետային զինծառայությունից հետո մեկնել էր Հունաստան: Սակայն մի օր ստիպված էր վերադառնալ, բայց արդեն ոստիկանների ուղեկցությամբ:

Համիկ ՊՈՂՈՍՅԱՆ

Սպանության փորձը բացահայտվեց

Մարտի 23-ի երեկոյան հիվանդանոցից ոստիկանության Սպիտակի բաժնում հաղորդում ստացվեց, որ հրազենային վնասվածքներով հիվանդանոց են տեղափոխվել Շենավան գյուղի երեք բնակիչ: Երկուսի վնասվածքը գլխին էր, երրորդինը` ձեռքին:

Հիվանդանոց մեկնած ոստիկանության եւ քննչական կոմիտեի ծառայողները օպերատիվ-հետախուզական միջոցառումների եւ քննչական գործողությունների արդյունքում պարզեցին, որ տղամարդիկ հրազենային վնասվածքները ստացել են Շենավան գյուղի տարածքում, ավելի հստակ` Շենավանից Արեւաշող գյուղ տանող դաշտամիջյան ճանապարհին: Դեպքի վայրի զննությամբ հայտնաբերվեցին փամփուշտներ:

Հետագա միջոցառումներով իրավապահները պարզեցին դեպքի մի շարք հանգամանքներ, այդ թվում` կենցաղային հարցերի շուրջ ծագած վեճի մասնակիցների շրջանակը:

Շենավանցի եւ վանաձորցի մի խումբ տղամարդկանց պարզաբանումները վերածվել էին ծեծկռտուքի եւ հանգուցալուծվել կրակոցներով:

Դեպքի առթիվ քրեական գործ հարուցվեց: Իրականացրած օպերատիվ-հետախուզական միջոցառումներով Սպիտակի ոստիկանները հայտնաբերեցին ու նախաքննական մարմնին ներկայացրին մի խումբ անձանց, որոնք, ըստ տեղեկությունների, դեպքի հետ առնչվում էին: Հետեւողական աշխատանքի արդյունքում քրեական հետախույզների տեսադաշտում հայտնվեց նաեւ հանցագործությունը կատարելու մեջ կասկածվող անձը` Վանաձորի բնակիչ Արայիկ Կարապետյանը, որին ոստիկանները հայտնաբերեցին Վանաձորի Չուխաջյան փողոցի տներից մեկում եւ բերման ենթարկեցին ոստիկանության Սպիտակի բաժին:

Կատարվում է նախաքննություն:

Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ

Կեղծ փողերի իրացում

Ապրիլի 11-ի գիշերը ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչություն բերման ենթարկվեց Երեւանի բնակիչ Սարգիս Անանյանը: Ոստիկանները օպերատիվ տվյալներ էին ստացել, որ նա բուքմեյքերական ընկերություններից մեկի գրասենյակում կեղծ եվրոներով պետք է խաղադրույք կատարի:

Թղթադրամներն իրացնելուց անմիջապես հետո երիտասարդը բռնվեց ու բերման ենթարկվեց ոստիկանություն:

Նախնական տվյալներով` Սարգիս Անանյանը, դեռեւս չպարզված այլ անձանց հետ, բուքմեյքերական ընկերության գրասենյակում որպես խաղադրույքների վճար իրացրել է տասնվեց հատ 200 եվրո անվանական արժեքով կեղծ թղթադրամներ` ընդհանուր 3200 եվրո: Նրա անձնական խուզարկությամբ հայտնաբերվեց ութ հատ 200 եվրո անվանական արժեքով թղթադրամ:

Ոստիկանները Սարգիս Անանյանի բնակության հասցեի խորդանոցից առգրավեցին 200 եվրո անվանական արժեքով քառասունվեց թղթադրամ` ընդհանուր 9200 եվրո:

Դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ:

Առանձնապես խոշոր չափերի` 14 հազար կեղծ եվրո ձեռք բերելու, պահելու եւ մի մասն իրացնելու կապակցությամբ կատարվում է քննություն:

Մ. Ս.

Համակարգ

ՀՀ ոստիկանությունը 101 տարեկան է

1918 թ. հուլիսի 24-ին հրապարակվեցին Հայաստանի Հանրապետության առաջին կառավարության կազմն ու ծրագիրը: Կառավարությունը բաղկացած էր արտաքին գործերի, ներքին գործերի, ֆինանսների, զինվորական եւ արդարադատության նախարարություններից: Ներքին գործերի նախարար նշանակվեց Արամ Մանուկյանը:

1920 թ. դեկտեմբերի 2-ին Հայաստանը հռչակվեց սովետական հանրապետություն: Հիմնվում է Ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատը, որի միջոցով Հեղկոմը ղեկավարում է երկիրը:

30-ականների երկրորդ կեսը Սովետական Միությունում նշանավորվում է բռնաճնշումների աննախադեպ ալիքով, որին նախորդել էր արտադատարանական բռնության մարմնի՝ Հատուկ խորհրդակցության, այսպես կոչված՝ Եռյակների հիմնումը: Բռնաճնշումների ենթարկվեցին ու զոհվեցին հազարավոր մարդիկ, այդ թվում՝ միլիցիայի աշխատակիցներ, որոնք այդ մռայլ տարիներին էլ շարունակում էին ազնվորեն կատարել իրենց ծառայողական պարտականությունները: Բնույթով՝ դասակարգային թե ժողովրդավարական, անունով՝ միլիցիա թե ոստիկանություն, գերխնդիրը հանցավորության հակազդումն է: Սովետական Հայաստանի միլիցիայի բարդ ու դրամատիկ կենսագրությունն այս սկզբունքի հաստատումն է:

1941 թ. հունիսի 22-ին ֆաշիստական Գերմանիան հարձակվեց Սովետական Միության վրա: Նոր իրավիճակում ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատին առաջադրվեցին հետեւյալ խնդիրները՝ օգնել զորահավաքին, ընդունել ու տեղավորել պատերազմական շրջաններից տարհանվածներին, օթեւան տալ անապաստան երեխաներին: Միեւնույն ժամանակ, շարունակվում է աշխատանքը հանցավորության հակազդման ուղղությամբ:

Պատերազմից հետո շարք են վերադառնում ռազմաճակատ մեկնած միլիցիայի աշխատակիցները: Կառույցը համալրվում է նախկին ճակատայիններով, որոնք ունեին մարտական հարուստ փորձ, բայց՝ ոչ մասնագիտական գիտելիքներ ու պատրաստվածություն, ինչն անհրաժեշտ էր հանցավորության դեմ արդյունավետ պայքարին: Օպերատիվ աշխատողները գործուղվում են դաշնթացների: Մասնագիտական պատրաստվածության խնդիրը միշտ առաջնահերթություն է եղել միլիցիայի համար:

Նոր հանցատեսակների դեմ արդյունավետ պայքար մղելու նպատակով կազմավորվում է սոցիալիստական սեփականության հափշտակությունների դեմ պայքարի բաժինը, ստեղծվում է կազմակերպված հանցավորության դեմ պայքարի ստորաբաժանումը: Հիմնվում են քրեագիտական լաբորատորիաներ, փորձաքրեագիտական ծառայություն, առաջնահերթություն է դիտվում բարձրակարգ քննչական կադրերի պատրաստման խնդիրը:

80-ականների վերջին Հայաստանը, սովետական մյուս հանրապետությունների պես, կանգնած էր լրջագույն ցնցումների եւ արմատական փոփոխությունների շեմին:

Սովետական Միության համար ճակատագրական 90-ականները Հայաստանում սկսվել էին 1988-ի փետրվարին: Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը Հայաստանին վերամիավորելու որոշումը ոչ միայն հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի նոր դրվագն էր ազդարարում, այլեւ վճռական քննություն էր կոմունիստական իշխանության հռչակած ժողովրդավարական վերակառուցման համար:

Արդեն 88-ին ՆԳ մարմինները համակարգում են Արցախյան շարժման խմբերի աշխատանքը զանգվածային միջոցառումների ժամանակ հասարակական կարգը պահպանելու գործում, ինչպես եւ սահմանամերձ գոտիներում աջակցում են տեղական ինքնապաշտպանական ջոկատներին: 1990 թ. հուլիսին ստեղծվում է միլիցիայի օպերատիվ հակազդման ջոկատը, որի խնդիրը պայքարն էր ակտիվացած քրեական տարրերի դեմ, սակայն ջոկատը մասնակցում է նաեւ սահմանամերձ շրջանների մարտական գործողություններին: Աշխարհազորային ջոկատների հետ ուս ուսի ծանր, արյունահեղ մարտերին մասնակցում են Ներքին գործերի նախարարության ստորաբաժանումները: Արցախյան ազատամարտին մասնակցել է միլիցիայի շուրջ հինգ հազար աշխատակից: Ներքին գործերի մարմինները պատերազմի ընթացքում տվել են 107 զոհ, հարյուրավոր ծառայողներ վիրավորվել են:

Ներքին գործերի մարմինների սխրանքն այդ տարիներին ունի մի կարեւոր առանձնահատկություն: Պայքարը երկու ճակատով էր՝ երկրի սահմանների պաշտպանություն թշնամու ոտնձգություններից եւ ներքին կայունության ու տարրական հասարակական կարգուկանոնի հաստատում: Օգտվելով խառնակ ժամանակներից՝ գլուխ էին բարձրացրել հանցավոր տարրերը, որոնք աշխարհազորայիններ անվան տակ հարձակվում էին միլիցիայի բաժինների վրա, հսկայական չափերի էր հասել զենքի անօրինական շրջանառությունը: Կազմակերպված հանցավորությունը, դուրս գալով ընդհատակից, փորձում էր իր կարգերը հաստատել նորանկախ հանրապետությունում: Ներքին գործերի մարմիններից գերմարդկային ջանք էր պահանջվում իրավիճակը վերահսկելու համար:

Պատվով անցնելով պատերազմի եւ լկտիացած հանցավորությանը զսպելու ծանրագույն շրջանը, կատարելով պետականաշինության ու կառույցի վերակազմավորման իր պարտքը, աշխարհի իրավապահ կառույցների շարքում գտնելով ու ամրագրելով իր տեղը՝ Հայաստանի Ներքին գործերի նախարարությունն այլեւս ներկայանում էր որպես իրավապահ կառույց, որը պատրաստ էր բոլոր ուժերն ու կարողությունները տրամադրելու իր ուղղակի գործառույթների իրականացմանը:

2001 թ. ապրիլի 16-ին ընդունվում է «Ոստիկանության մասին» օրենքը, որով Ներքին գործերի նախարարությունը վերակազմավորվում է Հայաստանի Հանրապետության ոստիկանության: Ձեւավորվում է օրենսդրական դաշտը: Ոստիկանության համար առաջնահերթություն է դառնում շարունակական բարեփոխման գործընթացը: Ոստիկանության ակադեմիան վերակազմավորվում է Կրթահամալիրի՝ եռաստիճան կրթական համակարգով, սկսում են գործել փորձաքրեագիտական ստորաբաժանումները՝ հագեցած ժամանակակից տեխնիկայով ու մասնագետներով, շարք է մտնում տեղեկատվության փոխանակման ժամանակակից համակարգը, պրոֆեսիոնալ միջոցներով հագեցվում են օպերատիվ ծառայությունները: Միանգամայն նոր սկզբունքներով ու տեխնիկական միջոցներով են գործում անձնագրային բաժինները, ձեւավորվում է համայնքային ոստիկանությունը, շարք են մտնում ոստիկանական տեղամասային հենակետեր, գործարկվում է դպրոցական տեսուչների ինստիտուտը, հասարակական կարգի պահպանություն է իրականացնում «հրեշտակների» գումարտակը, միջոցներ են ձեռնարկվում երթեւեկության անվտանգության ապահովման ուղղությամբ՝ արագաչափերի տեղադրումից մինչեւ ճանապարհային ոստիկանների դյուրակիր տեսասարքերի կիրառում:

Թվարկումը կարելի է շարունակել, բայց հիմքում նույն սկզբունքն է՝ ծառայություն օրենքին ու ժողովրդին, ծառայություն՝ անմնացորդ ու պրոֆեսիոնալ, ծառայություն՝ ժամանակի հրամայականին համընթաց, ծառայություն՝ մշտական ինքնակատարելագործման, բարեփոխման, լավագույն ավանդույթների պահպանման եւ նորի ամրագրման ու կենսագործման ճանապարհով:

Եվ գիտակցումը, որ առանց պետության չկա ոստիկանություն, բայց եւ՝ առանց ոստիկանության չի կարող լինել պետություն:

Արա ՄՈՎՍԻՍՅԱՆ

Բացահայտում են Էրեբունու ոստիկանները

Օրերս ոստիկանության Էրեբունու բաժնի քրեական հետախույզները, բնակարանային գողություն կատարելու կասկածանքով, բերման ենթարկեցին մայրաքաղաքի բնակիչներ Վիրաբ Գալստյանին ու Էդգար Թադեւոսյանին: Նախնական տվյալներով՝ նրանք թալանել են Վիրաբ Գալստյանի քեռու՝ Ջրաշեն թաղամասի 1-ին փողոցի տունը:

Հանցագործության բացահայտումից հետո մեր ստեղծագործական խումբն այցելեց տուժողներին: Տանտիկնոջ պատմելով՝ դեպքի օրը ինքն ու թոռներն են տանը եղել: Փողոցում իրեն է մոտեցել ամուսնու քրոջ որդու ընկերն ու ասել, որ արտերկրից ծանրոց է ստացել, որը փոստային բաժանմունքում է: Կինը թոռան հետ շտապել է ծանրոցի հետեւից, թոռնուհին մնացել է տանը: Մինչ նրանք կհասնեին փոստային բաժանմունք ու կվերադառնային, Վիրաբ Գալստյանը մտել է քեռու տուն ու գողություն արել: Թոռան հետ փոստային բաժանմունք հասած տանտիկինը տեղեկացել է, որ արտերկրից առաքված ծանրոցի պատմությունը հորինվածք է: Տուն է շտապել ու տեսել, որ ննջարանում դրված բջջային հեռախոսները չկան: Տեղում չէր նաեւ դարակի 85 հազար դրամը: Անմիջապես ահազանգել է ոստիկանություն:

Դեպքի վայր ժամանած Էրեբունու քրեական հետախույզները որոշ հանգամանքներ տեղում ճշտելուց եւ թաղամասում իրականացրած հարցումներից հետո եզրահանգել են, որ կնոջը խաբեությամբ հեռացրած Էդգար Թադեւոսյանը տնից մի քանի մետր հեռու սպասել է, որ քեռու տուն մտած Վիրաբ Գալստյանին իմաց տա քեռակնոջ վերադարձի մասին:

Էրեբունու ոստիկանները կատարվածի հանգամանքները պարզելուց հետո սկսեցին հետախուզական միջոցառումներն ու կասկածյալներին դեպքի հաջորդ օրը հայտնաբերեցին: Վիրաբ Գալստյանն ու Էդգար Թադեւոսյանը ներկայացվեցին դեպքի նախաքննությունը վարող մարմնին:

Կատարվում է նախաքննություն:

Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ

Կասկածյալները բերման են ենթարկվել

Ապրիլի 4-ին, ժամը 19-ի սահմաններում, հարմարեցված բանալիով բացել են մայրաքաղաքի մի բնակչի բնակարանի դուռն ու զարդեր գողացել: Դեպքի եւ բացահայտման մասին միայնակ ապրող տանտիկինը, որն աշխատավայրում է եղել, տեղեկացել է քրեական հետախույզներից: Ոստիկանության Երեւան քաղաքի վարչության քրեական հետախուզության բաժնի ծառայողները օպերատիվ-հետախուզական գործունեության շրջանակներում իրականացրել են օրենքով ոստիկանությանը վերապահված մի շարք գործողություններ, որոնց արդյունքում տեղեկություններ են ստացել կատարվելիք բնակարանային գողության վերաբերյալ: Օպերատիվ տեսադաշտում էին հայտնվել Երեւանի բնակիչներ Արթուր Եսայանն ու Վանիկ Քոչարյանը: Ըստ տեղեկությունների՝ նրանք ապրիլի 4-ին պետք է բնակարան թալանեին:

Ոստիկանության Երեւան քաղաքի վարչության քրեական հետախուզության ու Շենգավիթի բաժինների, Չարբախի բաժանմունքի օպերատիվ ծառայությունների աշխատակիցներից ձեւավորվեցին խմբեր, որոնք իրականացրին դարանակալումներ՝ հետեւելով տղամարդկանց շարժին: Արթուր Եսայանն ու Վանիկ Քոչարյանը աստիճանահարթակով բարձրացել են Արտաշիսյան փողոցի մի շենքի երկրորդ հարկ: Որոշ ժամանակ անց իջել ու արագ հեռացել են տարածքից: Ոստիկանները, համոզվելով, որ նրանք մտել են շենքի բնակարաններից մեկն ու գողություն արել, շարունակել են հետապնդումը եւ Շիրակի փողոցում բռնել են:

Ոստիկանության Շենգավիթի բաժին բերման ենթարկված Արթուր Եսայանն ու Վանիկ Քոչարյանը խուզարկվեցին: Հայտնաբերվեցին զարդեր, բժշկական ձեռնոցներ, լապտեր եւ այլ իրեր:

Դեպքի առթիվ քրեական գործ է հարուցվել:

Ներքնատեսան

Վանաձորցի ամուսիններ Համլետ Գրիգորյանի եւ Վարդուհի Բալասանյանի հարաբերությունները լարված էին: Կենցաղային վեճերը դարձել էին սովորական երեւույթ, սերը, հարգանքը իրենց տեղը զիջել էին անհանդուրժողականությանը: Հերթական վեճը դրա վկայությունն էր: Վարդուհին անհանգիստ էր. հյուրեր էին ունենալու, իսկ գնումներ դեռ չէին արել: Բայց եթե այդ թեմայով ամուսնու հետ խոսեր, ապա վեճն անխուսափելի կլիներ: Սակայն լուռ մնալն էլ հարցի լուծում չէր: Այնուամենայնիվ, որոշեց ամուսնուն հարցնել, թե երբ է պատրաստվում գնումներ անել: Ինչպես եւ ենթադրում էր՝ հարցը Համլետին հունից հանեց:

Վիճեցին: Համլետը մի քանի անգամ խփեց կնոջ գլխին: Վարդուհու ինքնազգացողությունը վատացավ, եւ «շտապօգնության» մեքենայով տեղափոխվեց Վանաձորի բժշկական կենտրոն:

Կատարվածի մասին տեղեկացան ոստիկանության Բազումի բաժնի աշխատակիցները: Նշանակվեց դատաբժշկական փորձաքննություն, որի եզրակացության համաձայն՝ Վարդուհուն պատճառվել էր թեթեւ վնաս՝ առողջության կարճատեւ քայքայումով:

Դիմողի բողոքի բացակայությամբ, սակայն, քրեական գործի հարուցումը մերժվել է:

Վեճերն անպակաս էին նաեւ վանաձորցի Սամվելի եւ Անահիտի ընտանիքում: Անահիտը ամուսնուն կասկածում էր անհավատարմության մեջ: Սամվելը փորձում էր հակառակն ապացուցել, փարատել կնոջ կասկածները, բայց ամեն ինչ ավարտվում էր վեճով, իսկ մշտական վեճերը անհանդուրժողականության մթնոլորտ էին ստեղծում ընտանիքում:

Հերթական վեճի ընթացքում Սամվելը ծեծեց կնոջը:

Կատարվածի վերաբերյալ ոստիկանության Բազումի բաժնում նյութեր նախապատրաստվեցին: Սամվել Մնացականյանի արարքում առկա էր քրեական օրենսգրքի 118 հոդվածով նախատեսված հանցարարք:

Դիմողի բողոքի բացակայությամբ քրեական գործի հարուցումը մերժվել է:

Անհեթեթ վեճ

Վանաձորցի Հարություն Մալխասյանը «ԳԱԶել»-ը կայանեց փողոցի վերջնամասում՝ երթուղու վերջին կանգառում: Մինչ շրջադարձ կատարելը, վանաձորցի Գուրգեն Նահապետյանը իր «ՎԱԶ-21014» մակնիշի մեքենայով ձայնային ազդանշան տվեց՝ հասկացնելով, որ ճանապարհը զիջի: Ու մինչ Հարությունը շրջադարձ կկատարեր, Գուրգենը զայրացած հարցրեց, թե ինչու ճանապարհ չի տալիս: Հարությունը փորձեց բացատրել, որ պատրաստվում էր շրջադարձ կատարել, բայց Գուրգենը կոպիտ պահանջեց, որ մեքենան հեռացնի:

Ծավալված երկխոսությունը վերածվեց վեճի, որի ընթացքում իրար խփեցին: Ու միայն Գուրգենի ընկերների միջամտությամբ հանդարտվեցին:

Կատարվածի մասին տեղեկացան ոստիկանության Բազումի բաժնի աշխատակիցները:

Երկուսն էլ խախտել էին քրեական օրենսգրքի 118 հոդվածի պահանջները: Բողոքի բացակայությամբ, սակայն, քրեական գործի հարուցումը մերժվել է:

Կարինե ՄՈՒՐԱԴՅԱՆ

Սկիզբը՝ նախորդ համարում

Խանդը սե՞ր է...

Խանդի «ասպարեզում» մարդն այնքան էլ հեռու չի գնացել իր «նախնուց»: Խանդողը աֆեկտի վիճակում կարող է ոչ միայն ծեծել, այլեւ՝ սպանել, եւ այն պահին, երբ ծեծում է սիրելի զուգընկերոջը, ոչ մի սեր էլ չի զգում՝ միայն իշխանությունը կորցնելու վախը ագրեսիվության տակ թաքցնելու խելահեղ ցանկություն: Եվ այդ ձգտման մեջ նա կարող է չափազանց հեռուն գնալ: Ուստի պետք է հատկապես զգույշ լինեն նրանք, ովքեր սիրում են արհեստական միջոցներով խանդ հրահրել: Խանդ հրահրելը վտանգավոր է նաեւ նրանով, որ որոշ ամուսիններ ապահարզանի դիմում են գրում: Հիմնավորումը մեկն է՝ «երրորդը պիտի հեռանա»: Եվ հաճախ հեռանում է ու... չի վերադառնում: Որովհետեւ իսկապես ուժեղ, ինքն իրեն հարգող մարդը հարգում է նաեւ դիմացինի ընտրության իրավունքը:

Ամենից վտանգավորը, սակայն, այն է, երբ ամուսիններից մեկը սկսում է տառապել խանդի մտագարությամբ: Մարդը առանց հիմնավորումների ու փաստարկների համոզված է, որ դիմացինը դավաճանում է իրեն, եւ մղվում է «գործելու»: Ընդ որում, սա այն դեպքն է, երբ ոչ մի բացատրություն ու ապացույց չի օգնում: «Վիրավորվածը» բացարձակ անքննադատ վերաբերմունք ունի սեփական վարքագծի հանդեպ, եւ նրա գործողություններից տուժում է ամբողջ շրջապատը:

Այս իրավիճակում քրեստոմատիկ է Օթելլոյի օրինակը՝ նախ խեղդենք, հետո կմտածենք:

Մի հանգամանք եւս. հաճախ անհիմն խանդը լինում է ալկոհոլամոլության հետեւանքով կամ էլ հարբեցողության պատճառ է դառնում...

Եթե տառապում եք խանդի զգացումից եւ կուզեիք դրանից ազատվել, այստեղ, ըստ ամենայնի, մտագարության մասին խոսք լինել չի կարող: Հիշեք, որ կողակցի դավաճանության մասին ցանկացած տեղեկություն ի սկզբանե պետք է կասկածի ենթարկել, նույնիսկ եթե ձեզ փաստացի ապացույցներ են ներկայացրել: Այսօր դժվար չէ նման նյութեր կեղծելը: Շատ հնարավոր է, որ նման կեղծիքով պատրաստվում են ձեզնից փող շորթել կամ էլ պարզապես ցանկանում են ոչնչացնել ձեր ընտանեկան երջանկությունը:

Ուստի, ցանկացած նման դեպքում առաջին հերթին պետք է սառը գլխով դատել: Զայրույթի պահին հնարավոր է այնպիսի քայլերի դիմեք, որոնց համար հետագայում կզղջաք, բայց արդեն որեւէ բան շտկելն անհնար կլինի:

Սա այն իրավիճակն է, երբ պետք է անտեսել հասարակական կարծիքը: Կա մի կարծրատիպ, թե նման դեպքերում ամուսինն անպայման պիտի բռնության դիմի, իսկ կինը հավաքի իրերն ու հեռանա: Որոշումները կայացրեք սթափ դատողությամբ ու սառնասրտորեն: Ընդհանրապես, խանդի դեմ լավագույն միջոցը զուգընկերոջը չնվաստացնելն է, այլ սեփական արժեքը բարձրացնելը, անհատականություն դառնալը, սեփական «ես»-ը հարգելը:

Կարեւոր հանգամանք է նաեւ նյութական անկախության ապահովումը:

Երբ ձեզ են խանդում, հիշեք, որ խանդը բնազդային զգացում է, եւ բանական լուծումների դիմելն անիմաստ է: Եթե զուգընկերը սկսել է խանդի տեսարաններ սարքել, նշանակում է ինչ-որ հարցերում ձեզ չի վստահում: Մտածեք՝ արժե՞ ապրել մեկի հետ, որն ամեն քայլափոխի ստուգում է ձեզ:

Եթե խանդի զգացումը վերածվել է տենդի, երբ խանդողին արդեն ոչ մի ապացույց պետք չէ, նախեւառաջ ապահովեք ձեր ֆիզիկական անվտանգությունը, ընդ որում՝ մի մոռացեք նաեւ երեխաների մասին, նրանց նույնպես վտանգ է սպառնում մոլեգնած կողակցի կողմից:

Նման իրավիճակներում անհրաժեշտ է նաեւ ներքին վերլուծություն անել: Նախ՝ պարզեք, թե ինչն է ձեզ կապում այդ մարդու հետ եւ ինչը կարող էր խանդի տեղիք տալ: Հաշվարկեք ձեր «ուժերը»՝ որքա՞ն կդիմանաք նման վիճակում, եւ այդ ընթացքում ձեր բանականությունը կկարողանա՞ հաղթահարել դիմացինի բնազդը:

Խանդը միշտ էլ ապակառուցողական ու վտանգավոր զգացում է, ուստի հիշեք, որ ապրել ախտաբանորեն խանդոտ կողակցի հետ, նույնն է թե վառվող պատրույգով ռումբի հետ ապրեք, եւ դժվար է գուշակել՝ ինչ պայմաններում ու երբ կպայթի ռումբը...

Համարվում է, որ խանդի պատճառը սեփականության զգացումն է, որն ամուսիններից մեկը ունենում է մյուսի հանդեպ: Նման կարծիք ունեցողները սկզբունքորեն իրավացի են, բայց դա զգացումների եւ հարաբերությունների որոշակիորեն պարզեցված տարբերակ է:

Պատրաստեց Տաթեւ ՄԵԺՈՒՆՑԸ

Ավարձալի ամփոփագիր

Ընտանեկան դասական բռնություն

Գիշերը ոստիկանություն է զանգել 29-ամյա մի երիտասարդ եւ հայտնել, որ ընկերուհու նկատմամբ ընտանեկան բռնություն է կատարվել:

Հաղորդում է տվել նաեւ 31-ամյա ընկերուհին. վիճաբանության ժամանակ, ծնողները ձեռքերով եւ ոտքերով խփել են իրեն՝ պատճառելով վնասվածք, ինչպես եւ հնչեցրել են սպանության սպառնալիքներ իր եւ ընկերոջ հասցեին:

Կալանավորի հին վերքերը

Հիվանդանոցից հաղորդում է ստացվել, որ կանչով մեկնել են ընդհանուր իրավասության 1-ին ատյանի դատարան՝ դեռեւս չպարզված հանգամանքներում վնասվածք ստացած 28-ամյա կալանավորին բուժօգնություն ցույց տալու, սակայն նա հրաժարվել է բուժօգնությունից: Ախտորոշվել էր «ձախ նախաբազկի կտրած վերք»:

Մեկնած ոստիկաններին կալանավորը հայտնել է, որ համաձայն չլինելով իր նկատմամբ կայացված մեղադրանքի հետ՝ եղունգներով վնասել է նախաբազկին եղած հին վերքերը:

Մատանու մատը

Ոստիկանություն է զանգել մի անհայտ քաղաքացի եւ խնդրել շտապ ոստիկան ուղարկել նշված ռեստորան:

Պարզվել է, որ ռեստորանի սենյակներից մեկում 26-ամյա Ալիկի նախկին ընկերուհի էվելինան, Ալիկին տեսնելով նոր ընկերուհու՝ Անահիտի հետ, գրպանից հանել է դանակը: Ալիկը դանակը խլել է նախկին ընկերուհու ձեռքից եւ նետել ռեստորանի տարածքից դուրս՝ անզգուշաբար վնասելով ձեռքի մատնեմատը: Զարմանալի զուգադիպությամբ՝ հենց մատանու համար նախատեսված մատը:

Տրանսսեքսուալ մերսում

Ոստիկանություն է զանգել 27-ամյա Արմանը եւ հայտնել, որ մերսման սրահում մեկը դանակով հարձակվել է իր վրա եւ մոտ 100 հազար դրամ են տարել իր գրպանից:

Արմանը հայտնել է, որ մերսման սրահում 40 հազար դրամ է վճարել մերսման համար, բայց հետո տեղեկացել է, որ մերսողը տրանսսեքսուալ է: Այս էական հանգամանքը պարզելուց հետո նա հետ է պահանջել փողը, սակայն մերսողը ոչ միայն հրաժարվել է, այլեւ դանակով սպառնացել է սպանել իրեն:

Պարզվել է 19-ամյա մերսողի ինքնությունը: Նա ներկայացվել է ոստիկանություն եւ տվել բացատրություն:

www.police.am

Ըստ ոստիկանության օպերատիվ հաղորդագրությունների ամփոփագրերի՝ ապրիլի 11-ից 18-ն ընկած ժամանակահատվածում ձեռնարկված օպերատիվ-փնտրողական եւ բացատրական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել կամ կամավոր ներկայացել է 21 հետախուզվող:

Հայտնաբերվածներից 1-ը հետախուզվում էր դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու, 1-ը՝ դիտավորությամբ առողջությանը թեթեւ վնաս պատճառելու, 1-ը՝ ծեծի, խարդախության եւ անհետաձգելի միջամտության որոշումը կամ պաշտպանական որոշումը դիտավորությամբ չկատարելու, 1-ը՝ տասնվեց տարին չլրացած անձի հետ սեռական հարաբերության կամ տասնվեց տարին չլրացած անձի նկատմամբ սեքսուալ բնույթի գործողություններ կատարելու, 2-ը՝ գողության, 1-ը՝ խարդախության, 1-ը՝ իրացնելու կամ պատրաստելու նպատակով թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի եւ դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության կամ դրանք ապօրինի իրացնելու, 1-ը՝ իրացնելու կամ պատրաստելու նպատակով թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի եւ դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության կամ դրանք ապօրինի իրացնելու եւ առանց իրացնելու նպատակի թմրամիջոցների կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ապօրինի շրջանառության, 1-ը՝ իրացնելու կամ պատրաստելու նպատակով թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի եւ դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության կամ դրանք ապօրինի իրացնելու եւ թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի եւ (կամ) դրանց պրեկուրսորների մաքսանենգությանը հանցակցելու համար:

Հայտնաբերվել է այլ երկրների կողմից 5 հետախուզվող:

Արձանագրվել է 74 ճանապարհատրանսպորտային պատահար. 7 մարդ զոհվել է, 105-ը՝ ստացել մարմնական վնասվածքներ:

Արձանագրվել է վրաերթի 20 դեպք. 3 մարդ զոհվել է, իսկ 17-ը ստացել են մարմնական վնասվածքներ:

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Հանրապետության ճանապարհներին

Ապրիլի 15-ին Երեւանի Մելքումովի փողոցում իրար են բախվել «Տոյոտա» եւ «Օպել» մակնիշի ավտոմեքենաներ. «Օպել»-ի 26-ամյա վարորդը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Ապրիլի 15-ին Երեւանի Խաղաղ Դոնի փողոցում իրար են բախվել «Հունդայ» եւ «ԲԻԴ» մակնիշի ավտոմեքենաներ, այնուհետեւ «ԲԻԴ» ավտոմեքենան բախվել է մայթեզրին կայանված «ԳԱԶ-32213» մակնիշի ավտոմեքենայի. «ԲԻԴ»-ի 51-ամյա վարորդը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Ապրիլի 15-ին «Միցուբիշի» մակնիշի ավտոմեքենայի վարորդը Աշտարակ քաղաքի Երեւանյան փողոցում վրաերթի է ենթարկել 9-ամյա տղայի, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Ապրիլի 15-ին «ՎԱԶ-21101» մակնիշի ավտոմեքենայի վարորդը Արարատի մարզի Բերքանուշ գյուղում վրաերթի է ենթարկել 33-ամյա քաղաքացու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Ապրիլի 15-ին «ԶՍԲ» տրակտորը Լոռու մարզի Մ-6 ճանապարհի 57-րդ կմ-ին բախվել է «Օպել Աստրա» մակնիշի ավտոմեքենայի եւ ընկել Դեբեդ գետը. 24-ամյա տրակտորիստը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Ապրիլի 15-ին Մայիսյան կամուրջ- Նոյեմբերյան ճանապարհի 18-րդ կմ-ին իրար են բախվել «Նիսան Տեանա» եւ «Մերսեդես Բենց» մակնիշի ավտոմեքենաներ. «Նիսան Տեանա»-ի 32-ամյա վարորդը, 69-ամյա ուղեւորուհին եւ «Մերսեդես Բենց»-ի 35-ամյա վարորդը եւ երեք ուղեւորները մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Ապրիլի 15-ին Երեւանի Գ. Չաուշի փողոցում իրար են բախվել «Մերսեդես», «ՎԱԶ-2106» եւ «Հոնդա» մակնիշի ավտոմեքենաներ. «ՎԱԶ-2106»-ի 48-ամյա վարորդը եւ 22-ամյա ուղեւորը մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Ապրիլի 16-ին Երեւանի Դավիթաշեն կամրջի վրա իրար են բախվել «ԿԻԱ» մակնիշի ավտոմեքենան եւ անհայտ մակնիշի տրակտորը. «ԿԻԱ»-ի 11-ամյա ուղեւորը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Ապրիլի 16-ին «Միցուբիշի» մակնիշի ավտոմեքենան Երեւանի Գարեգին Նժդեհի փողոցում դուրս է եկել երթեւեկելի հատվածից եւ վրաերթի ենթարկել 71-ամյա քաղաքացու, ապա բախվել բետոնե պատնեշին. 51-ամյա վարորդը եւ վրաերթի ենթարկվածը մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Ապրիլի 16-ին Երեւանի Կոմիտասի պողոտայի եւ Փափազյան փողոցի խաչմերուկում իրար են բախվել «ԿԻԱ», «Մերսեդես» եւ «ՎԱԶ-2106» մակնիշի ավտոմեքենաներ. «ՎԱԶ-2106»-ի 17-ամյա ուղեւորուհին մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Ապրիլի 16-ին «Լեքսուս» մակնիշի ավտոմեքենայի վարորդը Երեւանի Կոմիտասի պողոտայում վրաերթի է ենթարկել 58-ամյա քաղաքացու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Ապրիլի 16-ին Երեւան-Սեւան ճանապարհի 30-րդ կմ-ին իրար են բախվել «Օպել Աստրա-ԶԻ» եւ «ԶԻԼ-130» մակնիշի ավտոմեքենաներ. «Օպել»-ի երեք ուղեւորները մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Ապրիլի 16-ին «Օպել» մակնիշի ավտոմեքենան Սեւան-Երեւան ճանապարհի 38-րդ կմ-ին դուրս է եկել երթեւեկելի գոտուց եւ բախվել ճամփեզրի ծառերին. 39-ամյա վարորդը տեղում մահացել է:

Ուշադրությո՛ւն. մոլագար է

Մոլագարների մասին խոսակցությունը, հավանաբար, պետք է սկսել հենց անվանումից: Այն ժողովրդական ծագում ունի, սակայն լիովին արտահայտում է երեւույթի էությունը՝ ինչ-որ բանի մոլուցքով տարված: Սակայն եթե ավելի ճշգրիտ լինենք տերմինաբանության մեջ, պետք է նկատենք, որ մոլագարություն ասելով՝ հոգեբանները նկատի ունեն այնպիսի գաղափարների եւ պատկերացումների ամբողջություն, որոնք չեն համապատասխանում իրականությանը, աղճատում են այն, լիովին իշխում հիվանդի բանականության վրա ու բնութագրում նրա մտքի տրամաբանական ընթացքի խաթարումը:

Մոլագարները միայն սերիական մարդասպաններ չեն: Նրանք կարող են ունենալ ամենատարբեր մոլություններ: Իսկ սպանության կամ ընդհանրապես բռնության մասին խոսելիս կարելի է նկատել, որ մոլագարը զոհին կարող է հետեւել ամիսներ շարունակ կամ հարձակվել անթաքույց ու միանգամից: Ամեն ինչ կախված է հիվանդության աստիճանից ու մարդու վիճակից, ինչպես եւ ապրած կյանքից ու դաստիարակությունից:

Որքանո՞վ է իրավացի այն պնդումը, որ մոլագար դառնում են չսիրված երեխաները:

Սպանության դրդապատճառ կարող է լինել վրեժխնդրության զգացումը՝ փշրված մանկության համար, ինչի արդյունքում մոլագարը սպանում է «չար մորը» նմանվող որեւէ կնոջ: Բայց սա չափազանց մակերեսային ու պարզունակ պատկերացում է: Սպանության դրդապատճառներն առավել հաճախ սադիզմի ամենաբազմազան տարբերակներ են, որոնք դառնում են այս կամ այն «մոլության» մասը: Որպես կանոն, այո՛, ցանկացած մոլագար ներկայացնում է հասարակության ստորագույն հատվածը, բայց ոչ այնքան պայմանավորված դառն մանկությամբ, որքան ներկայում էլ այդպիսին լինելու հանգամանքով: Նա արդեն երեխա չէ, այլ հենց մեծահասակ, ում ոչ մեկը չի նկատում ու լուրջ չի ընդունում: Մոլագարն արդեն չի կարողանում իր անձնային կարեւորությունն ապացուցելու այլ ճանապարհ գտնել, իրեն արժանի զգալ ապրելու հասարակության մեջ, հասարակության լիարժեք անդամը լինելու: Այդ ինքնահաստատմանը նա հասնում է զոհի նվաստացման կամ սպանության ճանապարհով, այսինքն՝ «վերջինի» իր տեղը նրան զիջելով:

Այս պարագայում գործում է երկու ուղղորդիչ. նախ մոլագարը ուրիշի կյանքը տնօրինելու «իրավունք» է ստանում, ապա եւ «ապստամբում է» իրեն նվաստացնողների դեմ:

Չմոռանանք նաեւ, որ որոշ «սերիականներ» սպանում են... զանգվածային լրատվամիջոցներում «հայտնվելու» համար: Այստեղ արդեն գործում է Հերոստրատի փառքի ախտանիշը:

Փորձագետներից ու հոգեբույժներից շատերը նշում են, որ ոչ սակավ դեպքերում զոհի հոգեվարքը կամ մահը սեքսուալ հաճույք ու բավարարվածություն է պատճառում մոլագարին: Սրա լավագույն օրինակն է չարաբաստիկ Չիկատիլոն: Սակայն ճիշտ չի լինի այդ զգացողությունն ուղղակիորեն սեռական կոչելը: Մարդասպանը պարզապես զոհի մահվան պահին հաճույքների կենտրոնի ուժգին խթանում է ստանում, որը կարող է ուղեկցվել նաեւ սեռական հաճույքով, բայց՝ ոչ բոլոր դեպքերում: Այստեղ շատ բան կախված է կոնկրետ մոլությունից եւ դրա բովանդակությունից:

Սակայն վերադառնանք նախնական հարցին. որտեղի՞ց են հայտնվում մոլագարները: Չէ՞ որ եթե միանշանակ ընդունենք «չսիրված երեխաների» տեսությունը, ապա այդպիսի բոլոր երեխաները պիտի մոլագար դառնային: Նման բան, բարեբախտաբար, տեղի չի ունենում, ուրեմն նման եզրակացություններ անելու հիմքեր չկան:

Իրականում մոլագարի ձեւավորման ճանապարհին կա մի քանի միջանկյալ փուլ: Մոլագարը չի ձեւավորվում ուղղակիորեն երեխայից: Նույնիսկ «չսիրված» երեխան անցնում է կազմավորման բնականոն շրջաններ եւ կարող է միանգամայն առողջ ու օրինավոր մարդ դառնալ՝ նայած թե իր կենսաշրջաններում ինչ սոցիումների մեջ կհայտնվի:

Դրա լավագույն օրինակը տալիս է մանկատան եւ «բարեհաջող» ընտանիքներում մեծացած երեխաների համեմատությունը, երբ մանկատան երեխան հասունանալով՝ գտնում է իր տեղը հասարակության մեջ եւ դառնում լիարժեք քաղաքացի, իսկ «բարեհաջող» ընտանիքի երեխան՝ օրինազանց, հանցագործ կամ մոլագար-մարդասպան:

Շարունակելի

1990-ականների մերձմոսկովյան ավազակախմբերը

ԽՍՀՄ փլուզումը «լայն հնարավորություններ» ստեղծեց նոր հանցախմբերի առաջացման համար: Այդպես հիմք դրվեց Մեդվեդեւկյան հանցախմբին, որի կազմակերպիչն էր Պետական անվտանգության նախկին սպա Գրիգորի Գուսյատինսկին (Գրիշա Սեւերնի): Նա հասկացավ, որ ստեղծված անիշխանության պայմաններում հնարավոր է մեծ փողերի տեր դառնալ, ուստի իր հանցախմբի համար անդամներ հավաքագրեց Մոսկվայի Մեդվեդեվկո (այստեղից էլ հանցախմբի անվանումը) շրջանի սպորտային ակումբից: Նա ոչ միայն մարզվում էր ակումբում, այլեւ ամենայն ուշադրությամբ մարդիկ ընտրում:

Գուսյատինսկու ցանցը առաջինն ընկավ Անդրեյ Պիլեւը, որն իր կարճահասակության համար ստացել էր Կառլիկ մականունը: Շուտով հանցախմբին միացավ Պիլեւի կրտսեր եղբայր Օլեգը: Նա հանցախմբում ստացավ Սանիչ մականունը: Աստիճանաբար հանցախումբն ընդլայնվում է: Ընդգրկվում են «հաստիքային» մարդասպան Անդրեյ Կոնդրատեւը (մականունը՝ Գիվի), ապա էպիլեպտիկ Դմիտրի Խարինը: Որոշ ժամանակ անց ավազակախումբը համալրվում է եւս մի քանի հոգով:

Ահաբեկում էին գործարարներին՝ պահանջելով շահույթի որոշ մասը, իսկ ովքեր հրաժարվում էին, առեւանգում, տանում էին անտառ, որտեղ ֆիզիկական ուժի գործադրմամբ գալիս էին «ընդհանուր» համաձայնության: Այս ամենը կատարվում էր նախկին մսագործ Օլեգ Պիրեւի ղեկավարությամբ: Եթե ֆիզիկական ներգործությունը՝ ձեռքեր կամ ոտքեր ջարդելը, դաժանաբար ծեծելը չէր ազդում, սպառնում էին հաշվեհարդար տեսնել հարազատների հետ: Նման դաժան ու անմարդկային գործելակերպով կարողանում են իրենց ենթարկել Մոսկվայի Պոկրովսկի, Տուշինսկի եւ Միտինսկի շուկաները:

Մինչեւ 1993 թվականը իրավապահ մարմինները որեւէ տեղեկություն չունեին Մեդվեդեւկյան ավազակախմբի մասին: Ինչպես հետագայում պարզվեց, նման կարգավիճակ կարողացել էր ապահովել Գուսյատինսկին, որը կարողանում էր հմտորեն օգտագործել իր կապերը իրավապահ մարմինների հետ:

Գուսյատինսկու հանցախումբը դրամ էր շորթում մի գործարարից, որը բանկերի հետ զանազան մեքենայություններ էր անում: Մի ինչ-որ պահի գործարարից իրենց «բաժինն» են պահանջում քրեական աշխարհի ներկայացուցիչները: Գործարարը 100 հազար դոլար էր տալիս իր «տանիքին» Գուսյատինսկուն, սակայն վերջինս պահանջում է լրացուցիչ վճար՝ 6 միլիոն դոլար եւ «խորհուրդ» է տալիս քրեական «հեղինակություններին» վճարել 16 միլիոն դոլար: Գործարարը գլխի է ընկնում, որ իրեն ցանկանում են խաբել այսպես կոչված՝ «պաշտպանները», եւ թաքնվում է վարձակալած բնակարանում: Հանցագործները չէին ուզում հրաժարվել նման յուղոտ պատառից եւ սպառնում են հաշվեհարդար տեսնել նրա մերձավորների հետ: Գործարարը դիմում է միլիցիային: Գործը «փակելու» համար Գուսյատինսկին տալիս է մեկ միլիոն դոլար կաշառք, սակայն հանցախմբի վերաբերյալ տեղեկատվությունը մնում է իրավապահ մարմիններում:

Ավազակախմբի անդամները սարսափում էին իրենց ղեկավարից՝ իմանալով նրա դաժանությունը եւ հիշաչարությունը: Դրա վառ օրինակն է հաշվեհարդարը ավազակախմբի անդամ Յուրի Լուկյանչիկովի (Աֆրիկացի) հետ: Նա պրոֆեսիոնալ մարզիկ էր, գլխավոր մարդասպան Ալեքսեյ Շերստոբիտովի (Լյոշա Սոլդատ) ընկերը եւ աչքի էր ընկնում մեղմ բնավորությամբ: Լուկյանչիկովը թույլ չէր տալիս իրեն բաժին հասած գործարարներին ստորացնել, ինչի համար նրան հարգում էին: Նա երազում էր հեռանալ քրեական աշխարհից, բացել իր ակումբը, մարզել երեխաներին, սակայն ամեն ինչ այլ կերպ դասավորվեց:

Մի օր Լուկյանչիկովը օդանավակայանից տուն է տանում Գուսյատինսկու երիտասարդ կնոջը, որը նախկինում հայտնի էր Պիլեւ եղբայրների եւ այլոց հետ մտերմությամբ: Դուրս գալով մեքենայից՝ տիկինը հրամայում է Լուկյանչիկովին ճամպրուկները բարձրացնել բնակարան, բայց նա հրաժարվում է: Նման «հանդգնությունից» զայրացած կինը պահանջում է, որ «մեղավորը» պատժվի, քանի որ նման արարքով վիրավորել էր Գուսյատինսկուն: Վերջինս հրամայում է վերացնել Աֆրիկացուն: Հրամանը կատարվում է...

Գուսյատինսկու դաժանության մեկ այլ օրինակ: Խնջույքի ժամանակ շամպայնի շիշը բացելիս խցանը դիպչում է Գուսյատինսկուն: Ընդհանուր հռհռոցի տակ շիշը բացած երիտասարդը մոտենում է Գուսյատինսկուն եւ ներողություն խնդրում: Պարագլուխը մտերմաբար ձեռքը խփելով տղայի ուսին՝ հարցը համարում է փակված: Մի քանի օր անց սպանված երիտասարդին անտառում հայտնաբերում են սունկ հավաքողները:

Շարունակելի

Պատրաստեց **ՌՈՒԲԵՆ ՍԱՀԱԿՅԱՆԸ**

Սկիզբը` էջ 1

Առանց վաղեմության ժամկետի

...Երեւանի Սասունցի Դավթի փողոցը վերանվանվել է տարիներ առաջ: 1992-ին դեռ Մայակովսկու անվան էր: Քսանյոթ տարի առաջ Մայակովսկու-Բուռնազյան փողոցների խաչմերուկում օրը ցերեկով կատարված ծանր հանցագործությունը կրկնակի ողբերգություն էր: Երեխա զոհվեց: Բայց` ամեն ինչ հերթով...

Մայիսի 22: Էրեբունու ոստիկանները ժամը 15-ի սահմաններում ահազանգ են ստանում. Մայակովսկու-Բուռնազյան փողոցների խաչմերուկում սեւ մեքենայից կրակահերթ արձակեցին ու փախան, կան վիրավորներ:

Էրեբունու ոստիկաններից կազմված օպերատիվ խումբը րոպեներ անց հասնում է նշված խաչմերուկ: Դեպքի վայրում խառնաշփոթ էր: Հավաքված հոծ բազմության պատճառով խաչմերուկը փակվել էր: Ժողովուրդը խմբվել էր վիրավորների շուրջ, օգնություն էին գոչում, ջուր հասցնում... Ոստիկանները ահազանգում են «շտապօգնություն», նաեւ լրացուցիչ ոստիկանական ուժեր կանչում:

Դեպքի վայր ժամանած բժիշկների հետ իրավապահները հիվանդանոց են տեղափոխում արնահոսող վերքերով տուժածներին: Երիտասարդը մահանում է հիվանդանոցի ճանապարհին, իսկ գլխին հրազենային վնասվածք ստացած 7-ամյա երեխան մահանում է հիվանդանոցում:

Դեպքի վայրում ձեռնարկված անհրաժեշտ գործողություններին զուգահեռ օպերատիվ-քննչական խումբը «տաք հետքերով» հանցագործությունը բացահայտելու ուղղությամբ ծավալուն աշխատանք է սկսում: Հաջողվում է պարզել, որ դեպքի վայրում հնչել է ինքնաձիգի կրակահերթ, հանցագործները եղել են «ՎԱԶ-2109» մակնիշի սեւ ավտոմեքենայով, կրակել են հրնթացս, թիրախը եղել է կրծքավանդակի հրազենային վնասվածքներից մահացած երիտասարդը, իսկ երեխան պարզապես հենց այդ պահին փողոցն անցնելիս է եղել...

Փաստի առթիվ քրեական գործ է հարուցվում:

Դեպքի վայրի զննությունը, մի շարք փորձաքննությունների եզրակացությունները, իրականացված անհետաձգելի օպերատիվ գործողությունները, հարցումները բնակիչների շրջանում իրավապահներին հնարավորություն են տալիս որոշակիացնել կատարվածի պատկերը: Ըստ ձեռք բերված նախնական տվյալների` կատարվածը քրեական որոշ շրջանակների միջեւ ծագած կոնֆլիկտի հետեւանք էր: Մի քանի ամիս տարված աշխատանքի արդյունքում հաջողվում է պարզել կասկածյալների ինքնությունը:

Հանցագործությունը կատարել էր Սմբատ Գրիգորյանը` իր երեք ընկերների հետ: Նրանց հայտնաբերել չի հաջողվում: Չորսի նկատմամբ էլ հայտարարվում է հետախուզում:

Անցած տարիների ընթացքում քրեական գործի վարույթը մի քանի անգամ կասեցվում եւ վերսկսվում է: Իրավապահների օպերատիվ-հետախուզական, քննչական եւ որոնողական աշխատանքները չեն դադարում: Եվ ահա, իրավապահները նոր տեղեկություններ են ստանում ՌԴ գործընկերներից. Օրենբուրգ քաղաքի ՆԳ վարչության աշխատակիցների կողմից հայտնաբերվել եւ ձերբակալվել է հետախուզման մեջ գտնվող Սմբատ Գրիգորյանը:

Մի հատկանշական փաստ. Սմբատ Գրիգորյանը Ռուսաստանի Դաշնությունում բնակվում էր կեղծ փաստաթղթերով, ըստ որոնց` վաղուց Ստեփան Ռուբենյան էր: Հայ եւ ռուս իրավապահների համագործակցված աշխատանքի արդյունքում բացահայտվեց այս կեղծիքը, եւ կասկածյալը էքստրադիցիայի ենթարկվեց Հայաստան:

Ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության օպերատիվ խմբի կողմից Թբիլիսիից Երեւան է տեղափոխվել 35-ամյա Արմեն Կ.-ն, որը 2017 թ. սեպտեմբերից ոստիկանության Կենտրոնական բաժնի կողմից հետախուզվում էր քրեական օրենսգրքի 104 հոդվածի (սպանությունը), 34-104 հոդվածի (սպանության փորձը) եւ 235 հոդվածի (ապօրինի կերպով զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելը, իրացնելը, պահելը, փոխադրելը կամ կրելը) մեղադրանքներով:

Որպես ամփոփում. բոլոր հանցագործություններն են բացահայտվում: Առանձին դեպքերում նախաքննությունը կարող է տեւական լինել, երկարաձգվել, բայց, այնուամենայնիվ, յուրաքանչյուր մեղք գտնում է իր բաժին պատիժը:

Իսկ արտերկրի գործընկերների հետ արդյունավետ համագործակցության հերթական օրինակը կրկին վկայում է, որ մեր իրավապահները հաստատակամ են` յուրաքանչյուր դեպք, անկախ վաղեմությունից, հասցնել տրամաբանական ավարտի:

Բնակարանագողությունը բացահայտվեց

Ապրիլի 3-ին ոստիկանության Էրեբունու բաժնում բնակարանային գողության վերաբերյալ ահազանգ հնչեց:

Նոր Արեշի 4-րդ փողոցի տներից մեկի տերը վերադարձել ու տեսել էր, որ դարպասի կողպեքը չկա, տան մուտքի եւ հետնամասի դռներն էլ բաց են: Կողպեքը հայտնաբերել էր երեխայի հեծանիվի վրա, բանալին` ննջարանի հատակին: Համոզվելով, որ պահարանում եղած ժամացույցները, մատանին ու կրիչները չկան, ահազանգել էր ոստիկանություն:

Էրեբունու քրեական հետախույզները պարզեցին մի շարք հանգամանքներ` առաջ քաշելով վարկած, որի ճշգրտությունը րոպեներ անց հաստատվեց:

Դեպքից մի քանի օր առաջ բնակարանատերն իր նոր ծանոթի հետ եկել էր տուն: Երիտասարդը տեսել էր, որ տանտերը դարպասի բանալին վերցրեց դռան հարեւանությամբ տեղադրված գազի հաշվիչի վրայից: Ըստ ոստիկանների առաջ քաշած վարկածի` հենց նա էր մտել տուն ու գողություն արել: Բաց էր նաեւ տան հետնամասի դուռը: Քրեական հետախույզները բակն ուսումնասիրելիս կոշիկի հետքեր նկատեցին պարսպի վրա: Ակնհայտ էր, որ երիտասարդը մագլցել էր բարձր պարսպի վրա ու հեռացել հարեւանների կտուրների վրայով ու բակերով:

Ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում կարճ ժամանակում հիմնավորվեց կասկածյալի ինքնությունը` Վոլոդյա Ավագյան:

Նա հայտնաբերվեց հարեւան բակերից մեկում. պարիսպը բարձրանալուց հետո հարեւանի տան տանիքով հասել էր բակ, որտեղից փախչել չէր հասցրել:

Խուզարկությամբ Վոլոդյա Ավագյանի մոտ հայտնաբերվեցին տուժողի տնից հափշտակված մատանին, ժամացույցը, կրիչները եւ այլն:

Նախաքննությունը շարունակվում է:

Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ

Հայտնաբերվեց սահմանային անցակետում



Ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության ծառայողները, օպերատիվ տվյալներն իրացնելով, Բավրայի սահմանային անցակետից բերման ենթարկեցին 2018 թ. մարտից հետախուզման մեջ գտնվող Գուրգեն Ազարյանին:

Գուրգեն Ազարյանին քրեական օրենսգրքի միաժամանակ երկու հոդված է սպառնում` 112 (դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը) եւ 113 (դիտավորությամբ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելը): Տարբեր ժամանակներում ու տարբեր մարդկանց նկատմամբ կատարած նրա հանցավոր արարքներին անդրադառնանք առանձին-առանձին:

Հունվարի վերջն էր. Գուրգեն Ազարյանն ընկերների հետ զբոսնում էր: Դիմացից եկող զույգն անծանոթ էր. երիտասարդն ընկերուհու հետ զրուցելով` պիտի անցներ-գնար, եթե Գուրգենի «տղայությունն» այդ պահին չբռներ: Բռնե՛ց: Թե նախապես ինչ պայմանավորվեց ընկերների հետ, հայտնի չէ, բայց երբ հավասարվեցին, Գուրգենն ուսով դիպավ երիտասարդին ու շշնջաց` լա՛վն է... Երիտասարդն ուզեց պարզել նման պահվածքի պատճառը, եւ, որպես նույն պատկերացումներով ապրող մարդիկ, պայմանավորվեցին պարզաբանման համար հաջորդ օրը հանդիպել:

Պայմանավորված ժամին պայմանավորված տեղում էին: Գուրգենն իր ընկերների հետ էր, պարզաբանման եկածը` ընկերոջ հետ: Հեռացան մարդաշատ վայրից, ու Գուրգենը միանգամից «գործի» անցավ. քթին իջած բռնցքահարվածից երիտասարդն ընկավ` չկարողանալով ոչ միայն հակահարված տալ, այլեւ պաշտպանվել Գուրգենի, հետո նաեւ նրա հետ եկածների հարվածներից:

Տուժած երիտասարդին ընկերը հասցրեց հիվանդանոց: «Գանգուղեղային տրավմա, գլխի սալջարդ վերքեր...» եւ կյանքին վտանգ սպառնացող բազմաթիվ այլ վնասվածքներ ստացած երիտասարդին բժիշկները, բարեբախտաբար, կարողացան փրկել:

Իսկ Գուրգեն Ազարյանը անհետ կորել էր: Նրա նկատմամբ հետախուզում հայտարարվեց: Մինչ ոստիկանության աշխատակիցները որոնողական միջոցառումներ էին իրականացնում, Գուրգեն Ազարյանը մեկ այլ հանցագործության մասնակից դարձավ...

Այս պատմության գլխավոր «հերոսն» արդեն Գուրգեն Ազարյանի երեւանաբնակ բարեկամն է` քսանհինգամյա Սամիկոն Բունիաթյանը: Նրանց տանն էր Գուրգենը թաքնվում ոստիկաններից: Սամիկոն Բունիաթյանը Գուրգենից ոչ պակաս իր «ճշտի» տերն էր: Այդ հարցում, չնայած տարիքային տարբերությանը, հայացքները նույնն էին, ու Սամիկոնը «մեծավարի» կիսվեց Գուրգենի հետ: Իր` Երեւանում չեղած ժամանակ թաղեցի Ռաֆիկը փորձել էր սիրահետել ընկերուհուն: Ճիշտ է, ամեն ինչ փորձից այն կողմ չէր անցել, բայց Սամիկոնի հոգում նստվածք էր մնացել, ու այդ հարցը պիտի «ճշտով» լուծեր:

Ուշ երեկոյան Սամիկոնն ու Գուրգենը մայրաքաղաքի Թոթովենցի փողոցում սպասեցին Ռաֆիկին. Սամիկոնը գիտեր, որ նա այդ ժամին անցնելու էր այդտեղով: Քիչ անց նկատեցին մայթով բարձրացող Ռաֆիկին: Գուրգենը, իբր հեռախոսով խոսելով, անցավ նրա կողքով ու բռունցքով անսպասելի հարվածեց աչքին: Ռաֆիկը կորցնելով հավասարակշռությունը` ընկավ: Այդ ժամանակ ծառի հետեւից առաջ եկավ նաեւ Սամիկոնը: Գուրգենը պահեց Ռաֆիկի ձեռքերը, իսկ Սամիկոնը սիրտն ուզածի չափ ծեծեց...

Ձեռնարկված օպերատիվ-հետախուզական եւ քննչական միջոցառումների արդյունքում ամիսներ անց դեպքի հանգամանքները պարզվեցին: Սամիկոն Բունիաթյանը բերման ենթարկվեց ոստիկանության Նոր Նորքի բաժին, որտեղ էլ պարզվեց հանցակցի ինքնությունը: Պարզվեց նաեւ, որ նա հետախուզվում էր ոստիկանության Արտաշատի բաժնի կողմից:

Կասեցված քրեական գործի վարույթը վերսկսվել է:

Հասմիկ ՊՈՂՈՍՅԱՆ

Ապօրինի ծառահատում

Ապրիլի 5-ին ոստիկանության Իջեւանի բաժնի քրեական հետախույզները, իրացնելով ստացված օպերատիվ տեղեկությունները, «Հայանտառ» ՊՈԱԿ Իջեւանի անտառտնտեսության մասնաճյուղի Իջեւանի անտառպետության «Ծառուտի ձոր» տարածքում հայտնաբերեցին 44-ամյա Տիգրան Պ.-ին պատկանող «ԶԻԼ» բեռնատարը` բարձված 13 հացենու եւ 2 լորենու տարբեր տրամաչափի գերաններով: Իսկ մեքենայի մոտ հայտնաբերվեցին 20 հացենու եւ 3 լորենու տարբեր տրամաչափի գերաններ:

Տիգրան Պ.-ն ոստիկաններին հայտնաբերվածի վերաբերյալ համապատասխան փաստաթուղթ չներկայացրեց` խոստովանելով, որ ապօրինի հատել է կանգուն ծառեր:

Գերաններով բարձված բեռնատարը տեղափոխվել է ոստիկանության Իջեւանի բաժնի հատուկ պահպանվող տարածք, իսկ քաներեք գերան ի պահ է հանձնվել Իջեւանի անտառտնտեսության աշխատակիցներին:

Նախապատրաստվում են նյութեր:

Էրիկ ԱՍՏՎԱԾԱՏՐՅԱՆ

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Ուշացած պատիժ

Ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության օպերատիվ խումբը ՌԴ Մոսկվա քաղաքից Հայաստան տեղափոխեց 2006 թվականից սպանության մեղադրանքով հետախուզման մեջ գտնվող Գոռ Մինասյանին: Իրավապահ մարմինները հերթական անգամ հավաստեցին՝ հանցանքին հետեւում է պատիժը՝ ինչ-ինչ հանգամանքներով պայմանավորված՝ թեկուզ եւ ուշացած պատիժը:

Դեպքը տեղի էր ունեցել 2006 թվականին: Մարտի 13-ի գիշերը Գեղարքունիքի մարզի բնակչուհի Մարինե Գ.-ն ոստիկանությունում հայտարարություն էր տվել փեսացուի անհետանալու մասին: Փեսացուն՝ 1985 թ. ծնված Արթուր Գեղամյանը, նախորդ օրը տնից դուրս էր եկել եւ անհետ կորել: Աղջիկը գրեթե վստահ էր, որ նրա հետ վատ բան էր կատարվել. մարտի 13-ը Մարինեի ծննդյան օրն էր, իսկ Արթուրը՝ օրվա գլխավոր հյուրը:

Ոստիկանության մարզային վարչության եւ ենթակա բաժինների քրեական հետախույզները ձեռնամուխ եղան Արթուր Գեղամյանին հայտնաբերելու միջոցառումներին:

Ձեռնարկված օպերատիվ-հետախուզական եւ որոնողական աշխատանքների արդյունքում Երեւան-Սեւան մայրուղուց ոչ հեռու հայտնաբերվեց երիտասարդի դիակը: Բռնության հետքերը փաստում էին, որ սպանություն էր կատարվել:

Քրեական գործ հարուցվեց: Ծավալուն միջոցառումներ իրականացվեցին, որոնց արդյունքում պարզվեցին որոշ հանգամանքներ, ոստիկանների տեսադաշտում հայտնվեց կասկածյալը՝ մայրաքաղաքի բնակիչ Գոռ Մինասյանը: Նրան հայտնաբերել, սակայն, չհաջողվեց. մեկնել էր Ռուսաստանի Դաշնություն:

Սպանության մեղադրանքով հարուցված քրեական գործի վարույթը կասեցվեց հանցագործություն կատարած անձի գտնվելու վայրն անհայտ լինելու հիմքով: Գոռ Մինասյանին հայտնաբերելու միջոցառումները, սակայն, չդադարեցին: Եվ, ահա, դեպքից տասներկու տարի անց նա հայտնաբերվեց, ինչին էականորեն նպաստեց ռուս գործընկերների հետ ակտիվ համագործակցությունը:

Իսկ հիմա՝ ինչ էր կատարվել 2006-ի մարտի 12-ի գիշերը:

Արթուր Գեղամյանն ու Գոռ Մինասյանը 2003-2005 թթ. ժամկետային ծառայություն էին անցել նույն զորամասում: Մեկ-երկու անգամ վիճել էին, իսկ հետո էլ ինչ-որ հարցի շուրջ գրազ էին եկել. ով ճիշտ դուրս գար՝ մյուսին հարյուր դոլար էր տալու: Արթուրը պարտվել էր ու ծառայակից տղաների մոտ խոստացել, որ զորացրվելուց հետո կտա հարյուր դոլարը: Իսկ հետո Գոռը, որպես պարտքից ազատվելու ելք, առաջարկել էր թուղթ խաղալ. եթե Արթուրը հաղթեր, պարտքը հեչ էր դառնալու, իսկ եթե տանուլ տար՝ կրկնապատկվելու էր: Արթուրը տանուլ էր տվել ու դարձյալ բոլորի ներկայությամբ խոստացել զորացրվելուց հետո երկու հարյուր դոլար տալ Գոռին:

Մեկ ամիս անց զորացրվել էին: Երկու հարյուր դոլարը ստանալու պահանջով Գոռը մի քանի անգամ զանգել էր, հանդիպել Արթուրին, իսկ Արթուրն ամեն անգամ խոստացել էր, թե տալու է պարտքը:

Մարտի 12-ի երեկոյան Գոռը մայրաքաղաքից հասել էր Սեւան, զանգել Արթուրին ու պահանջել էր, որ հանդիպեն: Հանդիպել էին Սեւան քաղաքի սրճարաններից մեկում: Խոսակցության թեման նույնն էր, բայց այս անգամ Արթուրը կտրուկ հրաժարվել էր փող տալուց, մանավանդ, որ սպասելիք ծախսեր ուներ՝ հարսնացուին նվեր, հարսանիք...

Քայլել էին դեպի մայրուղի: Վեճը գնալով թեժացել էր: Հետո Գոռն առաջարկել էր ճանապարհից դուրս գալ եւ «խաղաղ, անաղմուկ» պայմաններում պարզաբանել հարցը:

Մայրուղուց բավական հեռացել էին՝ հընթացս վիճելով, հայհոյելով ու քաշքշելով իրար: Իսկ հետո Գոռը գրպանից հանել էր դանակն ու խփել Արթուրի որովայնին: Արթուրն ընկել էր, իսկ Գոռը շարունակել էր դանակով հարվածներ տեղալ նրա մարմնին: Հետո արնաքամվող Արթուրի գրպանից վերցրել էր փողերը, մատից՝ մատանին եւ պատահական մեքենայով վերադարձել Երեւան: Իսկ մի քանի օր անց մշտական բնակության էր մեկնել էր Ռուսաստանի Դաշնություն:

Տասներկու տարի անց, սակայն, հարկադրված էր վերադառնալ. առանձնապես ծանր հանցագործության համար քրեական պատասխանատվությունն ընդամենը տասներկու տարով հետաձգվել էր:

Կասեցված քրեական գործի վարույթը վերսկսվել է:

Հասմիկ ՊՈՂՈՍՅԱՆ

Ապրիլի 15-ի կեսգիշերին ոստիկանության Մարաշի բաժանմունքի աշխատակիցը ծառայություն իրականացնելիս Մաշտոցի պողոտայի եւ Գր. Լուսավորչի փողոցի խաչմերուկի գետնանցումից լսել է կրակոցի ձայն, որտեղից, խուլիգանության կասկածանքով, ՊՊԾ գնդի ծառայողների հետ բաժին բերման են ենթարկել 22-ամյա Դավիթ Հ.-ին:

Պարզվել է, որ Դավիթ Հ.-ն գազային ատրճանակից օդ է կրակել՝ խախտելով հասարակական կարգը: Նրա մոտից հայտնաբերվել է գազային ատրճանակ՝ լիցքավորված 5 փամփուշտով:

Նախապատրաստվում են նյութեր:

Կրակոցներ խանութի մոտ

Սկիզբը՝ էջ 1

Աշոտ Գրիգորյանն առաջադրված մեղադրանքում իրեն մեղավոր չի ճանաչել: Հայտնել է, թե դեպքի օրվա առավոտյան ինքն ու եղբայրը Գյումրու Անի թաղամասում չեն եղել եւ կապ չունեն տեղի ունեցած վիճաբանության ու Գագիկ Ղ.-ի ծեծի հետ: Ինքը ցերեկը գնացել է տուն ու տեսել է, որ իրենց տան դռան ապակին եւ այլ առարկաներ կոտրված են: Զայրացել է, թե կ գ տ ն ի նրանց, ովքեր նման բան են արել իրենց տանը: Մեքենայով գնացել է ավտոտնակի մոտ, բարձրացել է կտուրն ու այնտեղից վերցրել պապի հրացանը, որպեսզի պաշտպանի իրենց տունն ու հարազատներին: Մեքենայով շրջել է քաղաքում, երեկոյան վերադարձել է տուն եւ թաղամասում տեսել է հավաքված մարդկանց, իսկ հայրը ընկած է գետնին: Մեքենայից վերցրել է հրացանը, պահել է հավաքվածների վրա, գոռացել է, որ վիրավոր հորը տուն տանեն, ու կրակել է իր ուղղությամբ եկողների վրա: Այդ պահին թիկունքից խփել են իր գլխին: Ինքն ուշագնաց ընկել է, հետո ոչինչ չի հիշում: Պապի հրացանը հին էր, չգիտի՝ քանի՞ փամփուշտ կար մեջը, ինքը քանի՞ անգամ է կրակել: Ուշքի գալով՝ դիմել է փախուստի, բայց հետագայում իմանալով, որ իր նկատմամբ հետախուզում է հայտարարվել, ներկայացել է իրավապահներին:

Նա հայտնել է նաեւ, թե տանը մոտենալով՝ տեսել է, որ հորը ծեծում են մահակներով, դրանից վրդովվել ու կրակոցներ է արձակել: Պնդել է, որ կրակել է ինքնապաշտպանության նկատառումներով, իսկ տուժողներին վնասվածքներ պատճառվել են ո՛չ իր կրակոցներից, քանի որ իր ձեռքի հրացանը 16 մմ տրամաչափի է եղել, մինչդեռ դեպքի վայրում կրակել են 12 մմ տրամաչափի հրացանից:

Տուժող Գագիկ Ղ.-ն հայտնել է, թե դեպքի օրվա առավոտյան գնացել է Գյումրու Անի թաղամասի իրենց խանութը բացելու: Հետեւից հարձակվել են իր վրա, խփել են գլխին: Ինքը չի տեսել՝ ով հարձակվեց ու խփեց: Արյան մեջ կորած է եղել, խանութում լվացվել ու գնացել է տուն: Եղբայրը՝ Կնյազը, իր վիճակը տեսնելով, ինչ-որ մեկի հետ հեռախոսով խոսել ու պայմանավորվել է հանդիպել խանութի մոտ: Եղբայրը մենակ է գնացել այդ հանդիպմանը, ինքն ավելի ուշ է գնացել: Հանդիպման վայրին մոտենալով՝ կրակոց է լսել, տեսել է եղբորը՝ գետնին ընկած: Փորձել է բարձրացնել, այդ պահին իր վրա էլ են կրակել, ինքն ուշագնաց ընկել է, ուշքի է եկել հիվանդանոցում:

Դատարանը Աշոտ Գրիգորյանին մեղավոր է ճանաչել եւ դատապարտել 13 տարի ազատազրկման: Այս պատժին հաշվակցվել է մեկ այլ դատավճռով նշանակված պատիժը՝ 3 ամիս ազատազրկումը, վերջնական պատիժ է սահմանվել 12 տարի 9 ամիս ազատազրկումը:

Գոհար ՔԱԼԱՇՅԱՆ

Գողություն ակուղի պատուհանով

Թվում է՝ գողություն հանցատեսակի մասին նոր ոչինչ չկա ներկայացնելու: Գրեթե բոլոր գողերը՝ նորելուկ, թե փորձառու, աննշան տարբերություններով նույն սցենարներով ու գործիքակազմով են գործում: Ապօրինի թափանցում են բակ, տուն, նկուղ, ձեղնահարկ, խորդանոց կամ հասարակական նշանակության օբյեկտ ու տանում այն, ինչ նյութական արժեք է ներկայացնում եւ կարող է փողի վերածվել: Պարզապես անհրաժեշտ է հյուրանոցների, խանութների, հանրային սննդի օբյեկտների տերերի ուշադրությունը հրավիրել մի շատ պարզ հարցի վրա՝ զբաղվել ոչ միայն օբյեկտի ճակատային հատվածի, ներքին հարկաբաժինների, բաժանմունքների հսկմամբ, այլեւ հետնամասերի, որոնց հսկողությունից դուրս լինելու հանգամանքից կարող են օգտվել գողության նպատակով այնտեղ հայտնված անձինք, ինչպես վարվեց վանաձորցի տղամարդը:

Տղամարդը ստուգել ու տեղյակ էր, որ իր թիրախավորած հյուրանոցի հետնամասը չի հսկվում, գոնե գիշերային ժամերին ստույգ չի հսկվում: Դանգամանք, որը բավական էր հանցավոր ծրագիր մտածելու, ապա եւ իրականացնելու համար: Գիշերվա ժամը 1-ի սահմաններում հայտնվեց հյուրանոցի շրջակայքում: Ամեն ինչ նպաստավոր էր հետնամաս անցնելու եւ նկուղի պատուհանով հյուրանոց ներթափանցելու համար: Տարածը՝ գազի երկու կաթսա, չորս էլեկտրական սարքավորում ու այլ գործիքներ, խոշոր արժեքի էր, ու հյուրանոցի տիրոջը պատճառեց 1 միլիոն 400 հազար դրամի վնաս:

Հաջորդ օրը հյուրանոցի տերը նկատելով կորուստը՝ հաղորդում տվեց ոստիկանության Տարոնի բաժին:

Ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում գողը հայտնաբերվեց ու հիմա մեղադրյալի կարգավիճակով ներգրավված է հարուցված քրեական գործում:

Ռիտա ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

Գողությունը բացահայտվեց

Մարտի 28-ին ոստիկանության Նոր Նորքի բաժնում մի քաղաքացուց հաղորդում ստացվեց, որ դեկտեմբերին, երբ տանը մարդ չի եղել, իրենց տնակից հափշտակել են հագուստ, կենցաղային տեխնիկա ու պարագաներ, աշխատանքային գործիքներ:

Փաստի առթիվ հարուցվեց քրեական գործ:

Ոստիկանության Նոր Նորքի քրեական հետախույզները սկսեցին հանցագործության բացահայտման աշխատանքը:

Քրեական հետախույզների ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումներով պարզվեց, որ գողությունը հնարավոր է կատարած լինի Նոր Նորքի բնակիչ Գոռ Համբարձումյանը: Նա հայտնաբերվեց Նանսենի փողոցում եւ, գողությունը կատարելու կասկածանքով, բերման ենթարկվեց ոստիկանություն:

Պարզվեց նաեւ, որ Գոռ Համբարձումյանը մարտին կրկին նույն տնակից հափշտակել էր կենցաղային իրեր:

Գոռ Համբարձումյանի բնակարանի խուզարկությամբ հայտնաբերվել են աշխատանքային գործիքներ եւ հագուստ, որոնք, ըստ նախնական տվյալների, գողացված են:

Քննությունը շարունակվում է:

Նարեկ ՍԱՐԳԱՅԱՆ

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Սեղանի խաղ / Վահան ... ; Ավարառություն ; «Վիլհելմ ...» / Համաստեղություն ; Անգույն հեղուկ / Ռազմամթերք ; Ֆրանս. դերասանուհի / Հնագույն երկիր ; Գնդակը դարպասում ; ... Սիբելիուս ; Հռոմեացի բժիշկ եւ բնագետ ; ... Պլաչիդո

«Ծերունին խոտաքիչը» / Թանկարժեք քար ; Չոր ու ...

Ճիրան / ... Ֆորման ; Քաղաք, Արտեմիսի տաճար ; Գործնկար ; «Ոսկե գնդակ»- 78, 79

Արոմատիկ ածխաջրածին ; Սեւանի ձուկ

Բելգիացի զինագործ ; Ծովային թռչուն ; ... Աբովյան ; Հնդկ. իշխանական տիտղոս ; Ֆրանս. նկարիչ եղբայրներ

«Ռեւիզոր» / Սեմի, Քամի հայրը ; Հայ նախարարական տոհմ ; Այլաբանական ժանր ; Գետ, Բելառուս / Սլաքով ձող

Ուշադրություն

Հարգելի քաղաքացինե՛ր

ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչությունը երաշխավորում է ձեր բնակարանների եւ ամառանոցների անվտանգությունը, եթե դրանց պահպանությունը վստահեք ձեր բնակության վայրի պահպանության ստորաբաժանմանը:

Պահպանության համար գանձվելիք վարձավճարները անհամեմատ մատչելի են:

Մինչեւ 120ք/մ մակերես ունեցող բնակարանների, տների, ամառանոցների տեխնիկական միջոցների տեղադրման աշխատանքները կկատարվեն անվճար, իսկ պահպանության ամսական վարձավճարները կկազմեն 5000-15000 դրամ:

120 ք/մ-ից ավելի մակերես ունեցող տարածքների համար պահպանության ամսական վարձավճարները կկազմեն 10000-30000 դրամ:

Մանրամասների համար կարող եք զանգահարել 57-19-22 (Կենտրոն համայնք), 39-00-26 (Մալաթիա համայնք), 57-02-14 (Էրեբունու համայնք), 35-14-21 (Մաշտոց համայնք), 63-05-74 (Նոր Նորք համայնք), 44-21-23 (Շենգավիթ համայնք), 23-82-00 (Արաբկիր համայնք), 24-10-41 (Քանաքեռ-Զեյթուն համայնք):

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Հայկական խմբապար ; Պարբերական հրատարակութ. ; Տաքացուցիչ հարմարանք ; Ծաղկեփունջ (ճապ.) / Գյուղ, Աշտարակ ; Թատրոն, Ճապոնիա / Նահանգ, Մեծ Հայք ; Վառել / Չինգիզ խանի թոռը ; Պալատական պաշտոնյա ; ... Սմիթ ; Իջեւանատուն / Քաղաքպետ., Միջագետք



«Խաղաղ Դոնը», կինոռեժ. ; Հայ թագավոր ; Տրանսպորտի աշխատող ; Ուսումն. տարվա մաս / Աֆրիկ. երկիր ; Սննդամթերք ; Հյուսնի գործիք / Գինի ; Աբել / ճնշման միավոր

Գագաթ / Արեւել. միապետ ; Երախակալ / Իսպան. երգահան

Բրուտոսի «թիրախը» / Խոսքի մաս ; Թռչնի մաշկի ծածկույթ / ... տաճար ; Ֆրանսիացի քանդակագործ

Սաստիկ շոգ / Աղածինոներ ; «Տղամարդը եւ ...ը» ; Մարզ, ՌԴ / ... Ռավել

Գանգեսի վտակ / Ֆիզիկայի բաժին ; Հունական Յունոնան / Արյունատու ; Օպուս / Կոհակ ; Հայոց այբուբենի տառ ; Ինքնաթիռ

Լիճ, Եթովպիա / Մոհամեդ ... ; Հագուստ ; Հռենոսի վտակ

Հնագույն ժողովուրդ, մեդացի ; Հնդկական կրոնի աստված ; Էլբան՝ Չեխիայում ; Հոսող ջրի նեղ շերտ

Հաք ; Ինքնագնաց փոքր նավ / Արամազդի դուստրը ; ... - Ֆրանկովսկ

... - կոլա ; Սիրիուսից հետո 2-րդ պայծառ աստղը ; Խոշոր մողես ; Ֆրանս. մանրէաբան ; Պիտույք ; Ռուս կինոդերասան ; Տարադրամ / Փոքր գոմեշ

Աստղագուշակ

Խոյ - Ձեր մեջ կարթնանա ստեղծագործական ջիղը, ինչն աշխատանքային բնագավառում կօգնի որոշ հարցեր լուծել:

Ցուլ - Ձեր կյանքում փոփոխություն տեղի կունենա: Դժվար է ասել՝ դրական, թե՝ ոչ: Ամեն դեպքում, ծանր չեք տանի:

Երկվորյակ - Մինչեւ մի բան ասելն ու անելը, երկար մտածեք հետեւանքների մասին, որ մինիմալ կորուստ ունենաք:

Խեցգետին - Խորհուրդ չի տրվում չարաշահել ալկոհոլը: Կարող եք մի գավաթ գինի ըմպել հաճելի ընթրիքի ժամանակ, բայց՝ ոչ ավելին:

Առյուծ - Զգացմունքային չեք լինի որոշումներ կայացնելիս, ինչը լավ է, քանի որ աչալրջությունն անրաժեշտ է տվյալ պարագայում:

Կույս - Օգտակար կլինի այն ինֆորմացիան, որը ժամանակին հայտնել էր ձեր ընկերը: Այն ժամանակ չէիք էլ պատկերացնի, որ այդ տեղեկատվությունը կարող է ձեզ օգնել:

Կշեռք - Ձեր օգնության կարիքը կունենան: Կապ չունի, թե ինչ օգնություն կլինի: Եթե զգաք, որ կարող եք օգնել, մի հապաղեք:

Կարիճ - Որպեսզի խուսափեք կոնֆլիկտներից, ստիպված կլինեք գնալ որոշակի փոխզիջումների:

Աղեղնավոր - Նյութական խնդիրների հանդեպ հետաքրքրությունը կփոխվի տեղեկատվական ոլորտի հանդեպ ուշադրության:

Այծեղջյուր - Սպասում է դրամական գործերի հաջող կառավարում: Զգտում դեպի կրթությունը: Հաջող գործընկերություն:

Ջրհոս - Ավարտվում է անորոշության եւ տարօրինակ իրադարձությունների շրջանը եւ սկսվում ուժերի վերելքի շրջանը:

Ձուկ - Մեծ ուշադրություն ընտանիքի եւ ազգականների հանդեպ: Գեղեցիկ իրերի ձեռքբերում: 20-21-ին կառաջանան որոշ խնդիրներ՝ իմպուլսիվ, անհաշվենկատ վարքագծի պատճառով:

Փորձեք լուծել

Խնդիր N1



Սպիտակները սկսում են եւ հաղթում 2 քայլից

Խնդիր N2



Սպիտակները սկսում են եւ հաղթում 3 քայլից

Նախորդ խնդիրների պատասխանները

Խնդիր N1 1.f6-e7 h8:b6 2.a7:a3 x

Խնդիր N2 1.f4-e5 b2:f6 2. g7:e5 a1:f6 3.h8:g3 x

Պատրաստեց
Նշան ԱԼԱՎԵՐԴՅԱՆԸ
Շաշկու Հայաստանի չեմպիոն, IDF վարպետ, սպորտի վարպետ

Նախորդ համարի սկանվորդի պատասխանները



«02 շաբաթաթերթ» ՓԲԸ: Հասցեն՝ Նալբանդյան-130: Հեռ. 56-00-05, 54-81-52, 59-67-75 (հաշվապահություն): Համարի թողարկման պատասխանատու՝ Ն. Աթաբեկյան:
Գրանցման վկայական՝ 27312002739: Տրվել է՝ 13.03.2000 թ.: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 18.04.2019 թ., ժ. 17.00-ին: Տպաքանակը՝ 6950:
Համակարգչային շարվածքը՝ «02» շաբաթաթերթի: Տպագրվել է «Հենակետ» ՓԲԸ տպարանում: Հղումը «02»-ին պարտադիր է:
Չպատվիրված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում: Խմբագրությունը հեղինակների հետ գրագրություն չի վարում: Գովազդի պատասխանատուն պատվիրատուն է: